ԳԼՈԲԱԼ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին թարմացումը՝ 2025թ. հոկտեմբեր

Սույն Գաղտնիության քաղաքականությունը նկարագրում է.

1. Անձնական տվյալների հավաքագրումը
2. Անձնական տվյալների օգտագործումը
3. Ստացողներին
4. Անձնական տվյալների այլ պետություններ փոխանցելը
5. Ձեր ընտրությունները և տվյալների սուբյեկտի իրավունքները
6. Անվտանգությունը
7. Անձնական տվյալների պահպանումը
8. Ֆինանսական խրախուսման ծրագրի վերաբերյալ ծանուցումը
9. Երրորդ կողմի վճարային ծառայությունը
10. Ծառայությունների օգտագործումն անչափահասների կողմից
11. Սույն Գաղտնիության քաղաքականության փոփոխությունները
12. Կապը

Մենք՝ Stanley Black & Decker, Inc. և մեր դուստր կազմակերպությունները (**«Stanley Black & Decker», «մենք», «մեզ», «մերը»**), ձեզ ներկայացնում ենք սույն Գաղտնիության քաղաքականությունը՝ տեղեկացնելու համար, թե ինչպես և երբ ենք մենք մշակում անձնական տվյալները, որոնք հավաքագրում ենք.

- Մեր կողմից գործարկվող վեբկայքերի, միկրոկայքերի և բջջային կայքերի միջոցով, որտեղից մուտք եք գործում սույն Գաղտնիության քաղաքականությունը,
- Մեր ծրագրային հավելվածների միջոցով, որոնք հասանելի են համակարգչի, բջջային և միացված սարքերի օգնությամբ օգտագործելու համար,
- Մեր կողմից վերահսկվող սոցիալական մեդիայի էջերի և հավելվածների միջոցով, որտեղից մուտք եք գործում սույն Գաղտնիության քաղաքականությունը (այսուհետ միասին կոչվում են մեր «Սոցիալական մեդիայի էջերը»),
- Մեր բիզնեսի և մատակարարների հետ հարաբերությունների միջոցով,
- Մեր արտադրանքների և ծառայությունների միջոցով,
- Մեր կողմից ուղարկված HTML ձևաչափով էլ. նամակների միջոցով, որոնք հղում են կատարում սույն Գաղտնիության քաղաքականությանը կամ ձեզ հետ այլ հաղորդակցության միջոցով,

- Անցանց փոխգործակցությունների միջոցով, այն է, երբ դուք այցելում եք մեր խանութները կամ մանրածախ կրպակները, հաճախում եք առևտրային ցուցահանդեսներ և
- Մեզ հետ ձեր փոխգործակցությունների միջոցով, երբ տեղադրում եք պատվերներ, հաճախորդի աջակցության հարցումներ, այդ թվում՝ չաթ-բոթերի միջոցով:

Այս ամենը միասին վերցրած համարում ենք մեր «Ծառայությունները»:

Սույն Գաղտնիության քաղաքականությունը չի տարածվում երրորդ կողմի կայքերի, ծառայությունների կամ հավելվածների վրա, նույնիսկ եթե դրանք հասանելի են մեր Ծառայությունների միջոցով: Խնդրում ենք ծանոթանալ նրանց համապատասխան գաղտնիության քաղաքականություններին՝ իմանալու համար, թե ինչպես են նրանք մշակում ձեր Անձնական տվյալները և ինչպես են դրանք տրամադրում ուրիշներին:

1. Անձնական տվյալների հավաքագրում

«Անձնական տվյալների» դեպքում հասկանում են տվյալ, որը նույնականացնում է անձին կամ վերաբերում է նույնականացվող անձին, այդ թվում՝ կիրառվող օրենդրությամբ սահմանված իմաստով: Մենք հավաքում ենք Անձնական տվյալները՝ ձեր կողմից մեր Ծառայություններից օգտվելու միջոցով և որոշ դեպքերում երրորդ կողմերից: Մենք նաև օգտագործում և համակցում ենք տեղեկությունները, որպեսզի պատկերացում կազմենք ձեր մասին, օրինակ՝ արտադրանքների վերաբերյալ ձեր նախասիրությունների, բնութագրի, նախատրամադրվածությունների կամ վարքագծի մասին:

1.1 Ձեզնից հավաքվող անձնական տվյալները

Մենք հավաքում ենք Անձնական տվյալները՝ ձեր կողմից մեր Ծառայություններից օգտվելու ընթացքում, օրինակ՝ երբ դուք գրանցում եք օգտահաշիվ, գրանցում եք ձեր ապրանքները, փոխգործակցում եք հաճախորդների աջակցության կամ մեր ֆրանչայզիների կամ լիցենզիատների հետ, մասնակցում եք մրցույթների, բաժանորդագրվում եք մարքեթինգային հաղորդակցություններին, հարցումներ եք կատարում ապրանքների երաշխիքների վերաբերյալ, այցելում եք Ծառայությունների բաժինը, օգտվում եք մեր միացված սարքերից մեկից, մասնակցում եք միջոցառումների, գնումներ եք կատարում, հաղորդակցվում եք մեզ հետ կամ դառնում եք գործընկեր կամ մատակարար:

Կախված նրանից, թե ինչպես եք օգտվում մեր Ծառայություններից, մենք հավաքում ենք տարբեր տեսակի տվյալներ.

- **Կոնտակտային տվյալներ**՝ ձեր անունը, էլ. հասցեն, հեռախոսահամարը, բնակության հասցեն և երկիրը:

- **Օգտահաշվի տվյալներ**՝ մուտքի վավերապայմաններ (որոնք վերաբերում են ձեր հաշվին), սպառողի պրոֆիլը, օգտանունը, մականունը, գրանցված ապրանքների պատմությունը, դիտարկչի պատմությունը, զամբյուղի պարունակությունը, ցանկությունների ցուցակը և գնումների պատմությունը:

- **Ձայնային, էլեկտրոնային, տեսողական և նմանատիպ տվյալներ**՝ պատկերներ, ձայնագրություններ, տեսագրություններ կամ զանգերի ձայնագրություններ, որոնք ստեղծվում են մեր բիզնես գործունեության ընթացքում:

- **Գործարքային տվյալներ**՝ գնումների և պատվերների տեղեկություն, վճարային տվյալներ՝ ներառյալ դեբետային կամ կրեդիտային քարտի, բանկային հաշվի տվյալներ և հաշիվ-ապրանքագրի հասցե:

- **Սարքի տվյալներ**՝ ձեր կողմից օգտագործվող սարքի տեխնիկական տվյալներ, ինչպիսիք են սարքի տեսակը և մոդելը, համակարգի լեզուն, դիտարկչի տեսակը, աշխարհագրական դիրքը, օպերացիոն համակարգը, ինչպես նաև ձեր կողմից օգտագործվող սարքի նույնականացնող տեխնիկական նույնացուցիչներ, ինչպիսիք են՝ IP հասցե, IDFA (նույնացուցիչներ գովազդողների համար) և այլ եզակի նույնացուցիչներ:

- **Միացված սարքերի տվյալներ**՝ մեր ցանկացած միացված պրոդուկտի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն:

- **Օգտատիրոջ կողմից ստեղծված բովանդակություն**՝ հաճախորդների բավարարվածության հարցումներին առնչվող տեղեկություն, մեր ապրանքների վերաբերյալ թողնված կարծիքներ, հաճախորդների խնդրանքներ և հարցումներ և ձեր կողմից ստեղծված այլ բովանդակություն, ինչպիսիք են հրապարակումներ մեր Սոցիալական մեդիայի էջերում, ինչպես նաև համապատասխան անուն, օգտանուն, մականուն կամ օգտահաշվի այլ տվյալներ:

- **Պատկերներ և տեսանյութեր**՝ այն է ձեր կողմից ներկայացված լուսանկարներ և տեսանյութեր (օրինակ՝ որպես փոխհատուցման ծրագրի շրջանակներում) կամ մեր միջոցառումներում արված նկարահանումներ:

- **Ֆիզիկական տեղադրություն**՝ ձեր ֆիզիկական դիրքը, ներառյալ՝ ճշգրիտ աշխարհագրական դիրքը, որը կարող է ստացվել ձեր IP հասցեից, GPS կոորդինատներից, մեր միացված սարքերի օգտագործումից, մեր էլ.նամակների հետ ձեր փոխգործակցությունից կամ ձեռքով ընտրված վայրից, ZIP կամ փոստային կոդից՝ կախված ձեր նախընտրություններից:
  • **Պրոֆեսիոնալ բնութագրեր**՝ ձեր գործունեությունը, ոլորտը, զբաղվածության կարգավիճակը, մասնագիտությունը, աշխատանքային կամ արհեստի հմտությունների մակարդակը և փորձը:
  • **Դեմոգրաֆիկ բնութագրեր**՝ ընտանիքի անդամների թիվը, բնակության երկիրը, տարիքը, ծննդյան ամսաթիվը, էթնիկ պատկանելությունը, անդամակցությունը,

ոլորտը, եկամուտը, կրթությունը, զբաղվածության կարգավիճակը, մասնագիտությունը, արհեստը, արհմիության անդամակցությունը և սեռը:

• **Օգտագործման տվյալներ՝** տեղեկություն ձեր դիտարկման վարքագծի, գնումների ձևերի և տենդենցների, ներգրավվածության վերաբերյալ, այն է՝ որքան ժամանակ եք անցկացնում էջում, ինչ հղումներ եք սեղմում, որ էջերն եք այցելում, այցելությունների հաճախականությունը, որքան ժամանակ հետո եք վերադառնում:
• **Նախընտրություններ՝** ձեր նախընտրությունները՝ հիմնված գնումների սովորությունների կամ ձեր նախընտրությունների վերաբերյալ տեղեկությունների վրա, ներառյալ՝ ձեր նախընտրելի վճարման եղանակը, գնված, դիտված և առաջարկված ապրանքները, նախընտրելի լեզուն, մարքեթինգային հաղորդակցությունների և cookies-ի օգտագործման վերաբերյալ ձեր նախընտրությունները:
• **Սոցիալական մեդիայի տեղեկություններ՝** ձեր անունը, էլ.փոստի հասցեն, լուսանկարը, սոցիալական մեդիայի կոնտակտների ցանկը և ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է լինել կամ դուք եք դարձնում այն հասանելի մեզ, երբ դուք կապում եք ձեր սոցիալական մեդիայի օգտահաշիվը մեր Ծառայությունների հաշվի հետ:
• **Փոխհարաբերությունների պատմություն՝** մեզ հետ ունեցած ձեր կապի և պատվերների պատմությունը:

• Այլ անձնական տվյալներ, որոնք դուք տրամադրում եք մեզ:

Շատ այլ կայքերի սեփականատերերի և օպերատորների նման, որոշակի տեղեկություններ հավաքելու համար մենք նույնպես օգտագործում ենք ավտոմատացված տվյալների հավաքագրման գործիքներ, օրինակ՝ cookies և web beacons: Մեր հավաքագրման և cookies-ի օգտագործման մասին ավելի մանրամասն կարող եք տեսնել մեր Cookie Policy-ում՝ https://www.stanleyblackanddecker.com/privacy-policy/cookie-notice հասցեում: Կախված նրանից, թե ինչպես եք օգտվում մեր Ծառայություններից՝ մենք կարող ենք նաև հավաքել.

• **Առցանց ակտիվության տվյալներ՝** դիտված էջեր կամ էկրանի պատկերներ, յուրաքանչյուր էջում կամ էկրանի պատկերում անցկացրած ժամանակը, էջերի կամ էկրանի պատկերների միջև անցումները, գործողությունները յուրաքանչյուր էջում կամ էկրանին, մուտքի ժամերը և տևողությունը, ինչպես նաև՝ արդյոք բացել եք մեր մարքեթինգային նամակները կամ սեղմել դրանցում տեղադրված հղումները:
• **Սարքի տվյալներ՝** ձեր շարժական սարքի օպերացիոն համակարգը և տարբերակը, արտադրողը և մոդելը, էկրանի թույլտվությունը, հիշողության (RAM) և սկավառակի ծավալը, պրոցեսորի (CPU) օգտագործումը, սարքի տեսակը (օրինակ՝ հեռախոս, պլանշետ), IP հասցեն, լեզվի կարգավորումները, շարժական կապի օպերատորը, ռադիո/ցանցային տվյալներ (օր.՝ Wi-Fi, LTE, 3G), գովազդային ID, ընդհանուր վայրի տեղեկատվություն: Սա ներառում է cookies-ով և նման տեխնոլոգիաներով ստացված տվյալները:

• **Աուդիո/վիզուալ տվյալներ**՝ աուդիո, էլեկտրոնային, վիզուալ և նմանատիպ տեղեկություններ, օրինակ՝ զանգերի կամ տեսազանգերի ձայնագրություններ, մեր միջոցառումներում/կոնֆերանսներում արված լուսանկարներ և տեսանյութեր, տեսադիտարկման (CCTV) և տարածքի անվտանգության համակարգերի տվյալներ և

• **Գեոլոկացիայի տվյալներ**՝ սարքի գտնվելու վայրը կամ IP հասցեից ստացված մոտավոր աշխարհագրական դիրքը:

Մենք պետք է հավաքենք Անձնական տվյալները՝ ձեզ անհրաժեշտ ծառայությունները տրամադրելու համար: Եթե դուք չտրամադրեք պահանջվող տվյալները, մենք չենք կարողանա ապահովել Ծառայությունների մատուցումը: Եթե Ծառայությունների շրջանակում դուք տրամադրում եք մեզ կամ մեր մատակարարներին այլ անձանց վերաբերող որևէ Անձնական տվյալներ, ապա հավաստում եք, որ ունեք դրա համար լիազորություն և թույլատրում եք, որ մենք օգտագործենք դրանք ձեր կողմից այցելած ապրանքանիշի վեբկայքում առկա սույն Գաղտնիության քաղաքականության և մեր Օգտագործման պայմանների համաձայն:

1.2 Երրորդ կողմերի կողմից տրամադրվող անձնական տվյալներ

Որոշ դեպքերում մենք կարող ենք ստանալ ձեր մասին Անձնական տվյալներ նաև այլ աղբյուրներից, օրինակ՝

• **Հանրային տեղեկություններ** հանրայնորեն հասանելի տվյալների բազաներից, օրինակ՝ LinkedIn-ը, ապրանքների գնահատման կայքերը կամ տեղական առևտրային կամ արդյունաբերական ասոցիացիաների գրանցամատյանները, ինչպես նաև սոցիալական մեդիայի ալիքների մոնիթորինգի արդյունքում՝ Stanley Black & Decker-ի վերաբերյալ արձագանքների կամ ուղղակի հիշատակումների միջոցով կամ վեբ տվյալների հավաքագրման արդյունքում:

•**Գնումների վերաբերյալ տեղեկություններ** Stanley Black & Decker-ի դիլերներից կամ մանրածախ վաճառողներից կամ մեր ծառայություններ մատուցողներից:

• **Կոնտակտային տվյալներ, մասնագիտական բնութագրեր և այլ տեղեկություններ** տվյալների բրոքերներից, հանրային տվյալների բազաներից, բիզնես գործընկերներից, ներառյալ՝ համատեղ մարքեթինգային և գովազդային միջոցառումներից, միջոցառումների կազմակերպիչներից, ինֆլուենսերներից և մասնավոր մարքեթինգային կամ ուսումնասիրման/հարցումների տվյալների բազաներից,

• **Երրորդ կողմի մուտքեր,** երբ դուք ուղղորդվում եք հղումով, միանում կամ մուտք եք գործում մեր Ծառայություններ երրորդ կողմի ծառայությունների միջոցով (օրինակ՝ սոցիալական մեդիայի ծառայություններ): Այդ դեպքում դուք ուղղորդում եք ծառայությունը՝ մեզ տեղեկություն ուղարկելու համար, որը հսկվում է տվյալ

ծառայության կողմից կամ թույլատրվում է տվյալ ծառայության՝ ձեր գաղտնիության կարգավորումների միջոցով:

1.3 Զգայուն տվյալներ

Մենք կարող ենք հավաքել և մշակել այնպիսի տվյալներ, որոնք կարող են համարվել «զգայուն տեղեկատվություն»: Մենք դա կանենք միայն այն դեպքում, երբ դա թույլատրված է գործող օրենքներով՝ հետևելով այդ տվյալների մշակմանը վերաբերող բոլոր պահանջվող սահմանափակումներին: Անհրաժեշտության դեպքում մենք կստանանք ձեր հատուկ թույլատվությունը՝ զգայուն Անձնական տվյալները մշակելու համար:

Կախված գործող օրենքից՝ զգայուն տվյալները կարող են ներառել՝ ռասա, կրոն, էթնիկ պատկանելություն, ազգություն կամ ծագում, տարիք, գենդերային ինքնություն, ընտանեկան կարգավիճակ, առողջական կամ բժշկական տեղեկություն (ներառյալ՝ հաշմանդամության կարգավիճակ), կենսաչափական տվյալներ, կենսաչափական նկարներ, արհմիության անդամակցություն, վետերանի կարգավիճակ, կենսագրության ստուգման տվյալներ, դատական տեղեկություններ, օրինակ՝ դատվածության առկայության/բացակայության մասին տեղեկանք, ֆինանսական և բանկային տվյալներ, անձը հաստատող տեղեկություններ կամ ճշգրիտ աշխարհագրական դիրքի վերաբերյալ տվյալներ:

Եթե ձեր կողմից կամավոր կերպով տրամադրվող տեղեկությունների մեջ առկա են այնպիսի տվյալներ, որոնք օրենքով համարվում են զգայուն, դուք հստակ թույլատրում եք SBD-ին մշակել այդ անձնական տվյալները սույն Գաղտնիության քաղաքականությանը համապատասխան:

2. Անձնական տվյալների օգտագործում

Մենք օգտագործում ենք ձեր Անձնական տվյալները անհրաժեշտ չափով՝ մեր օրինական բիզնես նպատակներին հասնելու համար, ներառյալ՝ ստորև նկարագրված նպատակներով: Մենք կարող ենք անանունացնել և համախմբել այն Անձնական տվյալները, որոնք չեն նույնականացնում ձեզ կամ որևէ այլ անհատի, և այդ տվյալները օգտագործել կամ տարածել մեր բիզնեսի նպատակներով:

2.1 Պատվերների և վերադարձների մշակում

Մենք մշակում ենք ձեր կոնտակտային տվյալները, օգտահաշվի տվյալները, գործարքային տվյալները, սարքավորման տվյալները, տեղանքի տեղեկությունները, նախընտրությունները, փոխհարաբերությունների պատմությունը, հանրային տեղեկությունները և ձեր կողմից մեզ տրամադրվող այլ Անձնական տվյալները՝ ձեր պատվերները և վերադարձները մշակելու համար, ներառյալ՝ երաշխիք և ապրանքի

գրանցում, համապատասխան վճարումներ, փոխանակման կամ փոխհատուցման հարցումներ:

Մենք իրականացնելու ենք այս գործողությունները՝ մեր պայմանագրային հարաբերությունը ձեզ հետ վարելու համար և/կամ ձեր խնդրանքով պայմանագիր կնքելու նպատակով քայլեր ձեռնարկելու համար:

2.2 Ծառայությունների տրամադրում

Մենք մշակում ենք ձեր կոնտակտային տվյալները, օգտահաշվի տվյալները, սարքավորման տվյալները, օգտագործողի կողմից ստեղծված բովանդակությունը, տեղանքի, նախընտրությունների, սոցիալական մեդիայի տվյալները, փոխհարաբերությունների պատմությունը, հանրային տեղեկությունները, ֆիզիկական տեղադրությունը, ինչպես նաև ձեր կողմից տրամադրվող այլ Անձնական տվյալներ՝ ձեզ անձնականացված և արդյունավետ ձևով տրամադրելու այն Ծառայությունները, որոնք դուք մեզանից պահանջում եք, այդ թվում՝

1. բացել և կառավարել ձեր գրանցված օգտահաշվի մուտքը, թարմացնել և պահպանել տեղեկատվությունը,
2. ապահովել ցանկացած խելացի սարքերի գործառույթները, այդ թվում՝ տեղադրության վրա հիմնված հարցումներ (օր.՝ տեղական եղանակ կամ գտնվելու վայրից կախված ծառայություններ) կամ սարքերի զուգավորում,
3. ուղարկել ձեր օգտահաշվին վերաբերող վարչական հաղորդագրություններ, օրինակ՝ մեր պայմանների, կանոնների կամ քաղաքականությունների փոփոխությունների մասին:

Մենք իրականացնելու ենք այս գործողությունները՝ մեր պայմանագրային հարաբերությունը ձեզ հետ վարելու և/կամ ձեր խնդրանքով պայմանագիր կնքելու նպատակով քայլեր ձեռնարկելու համար:

2.3 Հաճախորդների սպասարկում

Մենք մշակում ենք ձեր կոնտակտային տվյալները, օգտահաշվի տվյալները, սարքի տվյալները, օգտագործողի կողմից ստեղծված բովանդակությունը, տեղանքի, նախընտրությունների տվյալները, փոխհարաբերությունների պատմությունը, ինչպես նաև այլ Անձնական տվյալներ՝ հաճախորդների սպասարկման հարցումներին պատասխանելու, օրինակ՝ աջակցություն տրամադրել ձեզ, և ձեր հարցումներն ու բողոքները մշակելու համար:

Մենք իրականացնում ենք այս գործողությունները մեր պայմանագրային հարաբերությունը ձեզ հետ վարելու համար:

2.4 Մարքեթինգային հաղորդագրությունների ուղարկում, բովանդակության անհատականացում, ակցիաների և մրցույթների կազմակերպում

Մենք օգտագործում ենք ձեր կոնտակտային տվյալները, օգտահաշվի տվյալները, օգտագործողի կողմից ստեղծված բովանդակությունը, մասնագիտական բնութագրերը, նախընտրությունների, սոցիալական մեդիայի տվյալները, փոխհարաբերությունների պատմությունը, գնումների տվյալները, ֆիզիկական տեղադրությունը, ինչպես նաև ձեր կողմից տրամադրված այլ Անձնական տվյալներ, այդ թվում՝ դրանց հիման վրա իրականացվող ենթադրություններ՝ ձեր նախընտրությունները պարզելու և մեր բովանդակությունն ու առաջարկները ձեզ համար անհատականացնելու, ձեզ ուղարկելու անհատականացված գովազդ և մարքեթինգային հաղորդագրություններ մեր Ծառայությունների, նոր և խորհուրդ տրվող ապրանքների և ընկերության այլ նորությունների վերաբերյալ, կազմակերպելու ակցիաներ և մրցույթներ և հաղորդակցվելու դրանց շուրջ: Մենք իրականացնում ենք այս մարքետինգային գործողություններն ու անհատականացումը՝ օգտագործելով մեր օրինական շահը, օրինակ՝ մեր Ծառայությունները խթանելու և ձեր նախընտրություններին համապատասխան անհատականացված Ծառայություններ տրամադրելու նպատակով:

Եթե մենք նախկինում հարաբերություն ենք ունեցել, կարող ենք ձեզ ուղարկել հաղորդագրություններ այն ապրանքների կամ Ծառայությունների վերաբերյալ, որոնք նման են նախկինում ձեր կողմից գնած կամ ուսումնասիրած ապրանքներին և Ծառայություններին: Դուք միշտ կարող եք հրաժարվել մարքեթինգային հաղորդագրություններից:

Որոշ դեպքերում, ներառյալ՝ երբ դա պահանջում է օրենքը, մենք կարող եք ստանալ ձեր համաձայնությունը՝ մարքեթինգային էլ.նամակներ ուղարկելու և մեր բովանդակությունը անհատականացնելու, օգտագործելով վերը նշված ձեր մասին տվյալները: Մենք կարող ենք նաև ստանալ ձեր համաձայնությունը, եթե ձեզ հետ նախկինում հարաբերություն չենք ունեցել: Եթե դուք տրամադրեք ձեր համաձայնությունը, ապա մենք կօգտագործենք վերը նշված Անձնական տվյալները՝ ապահովելու մարքեթինգային բովանդակության անհատականացումը համապատասխան ձեր հետաքրքրություններին: Եթե այլևս չեք ցանկանում ստանալ մարքեթինգային հաղորդագրություններ, կարող եք ցանկացած ժամանակ հրաժարվել՝ սեղմելով «Unsubscribe» կոճակը մեր մարքետինգային նամակագրության ներքևում, անհրաժեշտության դեպքում, պատասխանելով «STOP» մեր ուղարկած SMS հաղորդագրությանը, զանգահարելով մեզ +1(888)997-6648 հեռախոսահամարով կամ լրացնելով մեր՝ Տվյալների գաղտնիության իրավունքների հարցման ձևը :

Մենք կփորձենք բավարարել ձեր հարցումը հնարավորինս շուտ՝ ողջամիտ ժամկետներում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ եթե հրաժարվում եք մարքեթինգային հաղորդագրություններ ստանալուց, մենք շարունակելու ենք ուղարկել կարևոր վարչական

հաղորդագրություններ, որոնցից հրաժարվելու հնարավորություն չեք ունենա: Անհրաժեշտության դեպքում, մենք ունենք օրինական բիզնես շահ՝ ձեզ ուղարկելու մարքետինգային հաղորդագրություններ, ինչպես նաև կազմակերպելու ակցիաներ և մրցույթներ և տեղեկացնելու դրանց մասին:

2.5 Այցելությունների, համաժողովների և միջոցառումների կազմակերպում

Մենք օգտագործում ենք ձեր կոնտակտային տվյալները, օգտահաշվի տվյալները, մասնագիտական բնութագրերը, նախընտրությունները, փոխհարաբերությունների պատմությունը, գնումների տվյալները, լուսանկարներն ու տեսանյութերը, ինչպես նաև ձեր կողմից տրամադրված այլ Անձնական տվյալներ՝ կազմակերպելու և վարելու համաժողովներ և միջոցառումներ, օրինակ՝ ցուցահանդեսներ, դիմավորելու այցելուներին մեր տարածքում:

Մենք իրականացնելու ենք այս գործողությունները՝ մեր պայմանագրային հարաբերությունը ձեզ հետ վարելու և/կամ ձեր խնդրանքով պայմանագիր կնքելու նպատակով քայլեր ձեռնարկելու համար:

2.6 Մեր ապրանքների և ծառայությունների բարելավում

Մենք օգտագործում ենք ձեր օգտահաշվի տվյալները, մասնագիտական բնութագրերը, դեմոգրաֆիկ տվյալները, օգտագործման տեղեկությունները, գնումների տվյալները, փոխհարաբերությունների պատմությունը և ձեր կողմից տրամադրված այլ Անձնական տվյալներ՝ ձեր համար հնարավորություն ստեղծելու՝ կարդալու և թողնելու ապրանքների մասին արձագանքներ, վերլուծություններ իրականացնելու և հաճախորդների ուսումնասիրություններ անցկացնելու, օրինակ՝ մեր Ծառայությունների արդյունավետությունը բարելավելու, նոր ապրանքներ և Ծառայություններ մշակելու, օգտագործման տենդենցները բացահայտելու (օր.՝ որոնք են մեր Ծառայությունների ամենաշատ օգտագործվող մասերը) և մեր մարքեթինգային արշավների արդյունավետությունը գնահատելու համար: Նույն կերպ, մենք կարող ենք օգտագործել ձեր Անձնական տվյալները որակի ապահովման և վերապատրաստման նպատակներով:

Անհրաժեշտության դեպքում, երբ մշակում ենք ձեր Անձնական տվյալները մեր արտադրանքներն ու Ծառայությունները բարելավելու նպատակով, մենք անում ենք դա մեր օրինական շահերը պահպանելու համար, որպեսզի մեր արտադրանքներն ու Ծառայությունները շարունակաբար բարելավվեն՝ ապահովելով ձեզ համար հնարավորինս լավագույն փորձը: Օրենքով պահանջվելու դեպքում նման մշակման գործողությունների համար մենք կստանանք ձեր համաձայնությունը:

2.7 Գովազդներ

Մենք օգտագործում ենք ձեր Անձնական տվյալները, որոնք ստացվում են cookie-ների և նմանատիպ տեխնոլոգիաների միջոցով՝ ձեզ ցուցադրվող գովազդները ընտրելու և դրանց տեղադրումը որոշելու համար՝ հիմնվելով մեր Ծառայություններում և ձեր կողմից այցելված այլ կայքերում ունեցած փորձի վրա: Մեր cookie-ների հավաքագրման և օգտագործման վերաբերյալ ավելին կարող եք կարդալ մեր Cookie-ների քաղաքականության մեջ՝ https://www.stanleyblackanddecker.com/privacy-policy:

Երբ պահանջվում է օրենքով, մենք ստանում ենք ձեր համաձայնությունը ուղիղ մարքեթինգ իրականացնելու համար: Երբ թույլատրվում է կիրառվող օրենքով, մենք օգտագործում ենք նաև նպատակային գովազդ՝ հիմնվելով մեր օրինական շահերի վրա, օրինակ՝ ձեր նախասիրություններին համապատասխան անհատականացված Ծառայություններ մատուցելու համար:

2.8 Նոր գործընկերային հարաբերությունների ստեղծում և գոյություն ունեցողների պահպանում

Մենք օգտագործում ենք ձեր կոնտակտային տվյալները, օգտահաշվի տվյալները, մասնագիտական բնութագրերը, հարաբերությունների պատմությունը և ձեր կողմից տրամադրած այլ Անձնական տվյալներ՝ մատակարարների, վաճառողների և դիստրիբյուտորների հետ նոր գործընկերային հարաբերություններ ստեղծելու, հայտերի, առաջարկների և պայմանագրերի կազմակերպման, գործընկերների ներգրավման, Ծառայությունների մատուցմանն աջակցելու, հետադարձ կապի տրամադրման և հարաբերությունների կառավարման, ինչպես նաև պայմանագրերի երկարաձգման կամ դադարեցման համար:

Անհրաժեշտության դեպքում, եթե մենք մշակում ենք ձեր Անձնական տվյալները նոր գործընկերային հարաբերություններ կառուցելու և գոյություն ունեցողները պահպանելու նպատակով, ապա հիմնվում ենք մեր օրինական շահերի, ինչպես նաև մեր գործընկերների կամ երրորդ կողմի օրինական շահերի վրա՝ բիզնես իրականացնելու և ծառայությունների որակը հնարավորինս բարձր մակարդակում պահելու համար: Երբ պահանջվում է օրենքով, ձեր համաձայնությունն անհրաժեշտ կլինի նման գործողություններ իրականացնելու համար:

2.9 Տեղեկատվության փոխանցում երրորդ կողմին վաճառքի կամ բիզնես գործարքի շրջանակում

Մենք կարող ենք մշակել ձեր Անձնական տվյալները՝ դրանք երրորդ կողմին ամբողջությամբ կամ մասամբ բացահայտելու կամ փոխանցելու համար, եթե Stanley Black & Decker-ը միաձուլվի, ձեռք բերվի, մասնակցի կորպորատիվ վերակազմավորման, համատեղ ձեռնարկության, հանձնման, վաճառքի կամ իր բիզնեսի, ակտիվների կամ բաժնետոմսերի ամբողջական կամ մասամբ փոխանցման մեջ (ներառյալ սնանկության և

նմանատիպ գործընթացները): Նման երրորդ կողմերը կարող են լինել, օրինակ՝ ձեռք բերող ընկերություն և դրա խորհրդատուները:

Անհրաժեշտության դեպքում, մենք մշակելու ենք ձեր Անձնական տվյալները մեր օրինական բիզնես շահերի հիման վրա նման վաճառքի կամ բիզնես գործարքի շրջանակներում՝ բիզնեսը վարելու նպատակով: Բացի այդ, կախված ձեր իրավասություններից, մենք իրականացնում ենք այս գործողությունները՝ ձեզ հետ մեր պայմանագրային հարաբերությունը կառավարելու համար:

2.10 Մեր Ծառայությունների պաշտպանությունը չարաշահումներից և անօրինական գործողություններից

Մենք օգտագործում ենք ձեր Անձնական տվյալները մեր Ծառայությունները չարաշահումներից և ապօրինի գործողություններից պաշտպանելու համար: Այն ներառում է անվտանգության աուդիտներ, օրենսդրական, կարգավորող կամ պայմանագրային պահանջներին ներքին գործընթացների համապատասխանության ստուգում, խարդախության մոնիթորինգ և կանխարգելում, ինչպես նաև ձեր գրանցման կամ մեր Ծառայություններից օգտվելու համապատասխանությունը մեր գնումների պայմաններին և Օգտագործման պայմաններին: Օրինակ՝ մենք կարող ենք ուսումնասիրել ձեր կողմից համապատասխան խանութի վեբկայքում գրանցված հանրային կարծիքները՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանում են մեր Օգտագործման պայմաններին, որոնք առկա են ձեր կողմից այցելած ապրանքանիշի կայքում:

Այս պարագայում մենք մշակում ենք ձեր Անձնական տվյալները՝ մեր օրինական պարտականություններն ու պարտավորությունները կատարելու և, անհրաժեշտության դեպքում, մեր օրինական շահերը կամ մեր գործընկերների կամ երրորդ կողմի օրինական շահերը պահպանելու համար՝ չարաշահումների և անօրինական գործողությունների, օրինակ՝ խարդախ գործարքների, կանխարգելման նպատակով:

2.11 Իրավական պարտավորությունների կատարումը

Մենք օգտագործում ենք ձեր Անձնական տվյալները՝ մեր իրավական պարտավորությունները կատարելու համար: Սա կարող է ներառել այն դեպքերը, երբ իրավապահ մարմինները կամ ներկայացուցիչները, դատարանները, պետական մարմինները կամ գործակալությունները, այդ թվում՝ տվյալների պաշտպանության գծով իրավասու մարմինները ներկայացնում են իրավաչափ հարցումներ: Օրինակ՝ մեզանից կարող են պահանջել հավաքել և փոխանցել ձեր Անձնական տվյալները մեր ֆինանսական հաստատությանը կամ վճարային ծառայությունների մատակարարին՝ թույլ տալու նրանց կատարել իրենց օրինական պարտավորությունները, ինչպիսիք են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման կիրառվող օրենսդրության պահանջներին համապատասխանող պարտականությունները:

Նույն կերպ, մենք կարող ենք կիսվել ձեր Անձնական տվյալներով իրավապահ կամ դատական մարմինների հետ՝ հաշվի առնելով ձեր գաղտնիության շահերն ու այլ գործոններ, որպես ապացույց կամ եթե կան հիմնավորված կասկածներ, որ մեր Ծառայությունների միջոցով կամ մեզ հետ այլ փոխգործակցության ընթացքում ձեր կողմից կատարվել է որևէ անօրինական գործողություն կամ հանցագործություն: Նման գործողություն կարող է պահանջվել, օրինակ՝ իրավական պահանջներին կամ իրավական գործընթացներին համապատասխանելու համար, այդ թվում ձեր բնակության երկրից դուրս գործող օրենքներին, մեր օգտագործման պայմանների և այլ համաձայնագրերի պարտադիր կիրառման համար, այդ թվում վճարումների և պարտքերի հավաքագրման նպատակներով, մեր կամ երրորդ կողմի, մեր կապակցված ընկերությունների կամ ընդհանուր հասարակության սեփականության իրավունքներն ու անվտանգությունը պաշտպանելու համար, կամ դադարեցնելու այնպիսի գործունեություն, որը մենք համարում ենք անօրինական, ոչ էթիկական կամ իրավական պատասխանատվության ենթակա:

2.12 Արտակարգ իրավիճակների և միջադեպերի արձագանքման համակարգ

Մենք օգտագործում ենք ձեր Անձնական տվյալները՝ ըստ անհրաժեշտության, տարածքում գտնվող անձնակազմի և այցելուների անվտանգությունը ապահովելու, տարածքում տեղի ունեցած պատահարներին և բժշկական կամ այլ արտակարգ իրավիճակներին արձագանքելու, դրանք կառավարելու և փաստաթղթավորելու համար, տարածքները ակտիվ վերահսկելու՝ միջադեպերի պատշաճ կանխարգելումն, արձագանքումն ու փաստաթղթավորումը ապահովելու նպատակով, արտակարգ իրավիճակների ծառայություններին աջակցության համար դիմելու և միջադեպերի կամ արտակարգ իրավիճակների դեպքում ծանուցումներ ու զգուշացումներ ուղարկելու (օրինակ՝ SMS-ով, էլ. փոստով, զանգով, աուդիո-վիզուալ սարքերի միջոցով և այլն) նպատակով:

Երբ մենք մշակում կամ տարածում ենք ձեր Անձնական տվյալները այս նպատակներով, մենք դա անում ենք՝ ձեզ հետ մեր պայմանագրային հարաբերությունը կառավարելու համար, անհատների կենսական շահերը պաշտպանելու, մեր իրավական պարտավորություններին համապատասխանելու և/կամ օրինական շահի հիման վրա, օրինակ՝ մեր տարածքների անվտանգությունն ապահովելու համար:

3. Ստացողներ

- Մենք ձեր Անձնական տվյալները կփոխանցենք երրորդ կողմերին, միայն ինչպես սահմանված է սույն Գաղտնիության քաղաքականությունում:

3.1 Տեղեկություններ, որոնք մենք փոխանցում ենք մեր Ծառայություններն ապահովելու նպատակով

Դուք հասկանում եք, որ եթե գնում կամ օգտագործում եք մեր ապրանքներն ու Ծառայությունները, ձեր Անձնական տվյալները կարող են նաև մշակվել երրորդ կողմերի կողմից, որոնք մեր անունից մշակում են ձեր տվյալները՝ ձեզ մեր ապրանքներն ու Ծառայությունները տրամադրելու, դրանք բարելավելու և Բաժին 2-ում՝ «Անձնական Տվյալների օգտագործում» նշված այլ նպատակներին հասնելու համար: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում ապրանքների գրանցումներով, վեբկայքի հոստինգով, տվյալների վերլուծությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների և հարակից ենթակառուցվածքների ապահովմամբ, ինչպես նաև գովազդային և վերլուծական ծառայություններով:

Մենք երրորդ կողմերին կներգրավենք ձեր Անձնական տվյալների մշակմանը միայն այն չափով, որն անհրաժեշտ է Բաժին 2-ում՝ «Անձնական Տվյալների օգտագործում» նշված նպատակներին հասնելու համար: Մեր երրորդ կողմի մշակողները կարող են մշակել ձեր Անձնական տվյալները միայն մեր անունից և մեր կողմից տրված գրավոր հրահանգներով: Այս մշակողներից որոշները կարող են գտնվել այնպիսի երկրում, որտեղ տվյալների պաշտպանությունը տարբերվում է ձեր երկրից, և նրանք մուտք կունենան ձեր Անձնական տվյալներին այնքան, որքան անհրաժեշտ է իրենց գործառույթները կատարելու համար, սակայն չեն կարող դրանք կիսել որևէ այլ կողմի հետ կամ օգտագործել որևէ այլ նպատակով:

3.2 Տեղեկություններ, որոնք կիսում ենք մեր դուստր ընկերությունների, լիցենզիատների և ֆրանչայզիների հետ

